ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱՑՅԱԼԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ (1 Պետրոս 1-ից)
SPECIAL TOPIC: BELIEVERS' INHERITANCE (from 1 Peter 1)

ՀԿ-ում բացի Ղևիի ցեղից բոլոր ցեղերը որպես ժառանգություն ստացան հողատարածք (տես՝ Հեսու 14-22): Ղևտացիները, որպես քահանաների ցեղ, տաճարի սպասավորներ և տեղական վարդապետներ, համարվում էին որպես հենց ՅԱՀՎԵԻՆ իրենց ժառանգությունը ունեցողներ (տես՝ Սաղմ. 16:5, 73:23-26, 119:57, 142:5, Ողբ 3:24): ՆԿ-ը գրողները հաճախ վերցնում էին Ղևտացիների իրավունքները և առանձնաշնորհումները և դրանք կիրարկում բոլոր հավատացյալների համար: Սա նրանց կողմից կիրառվող կերպ էր պնդելու, որ Հիսուսի հետևորդներն են Աստծո իրական ժողովուրդը և հիմա բոլոր հավատացյալները կանչված են ծառայելու որպես Աստծո քահանաներ (տես՝ 1 Պետ. 2:5,9; Հայտն. 1:6), ինչպես որ ՀԿ-ը պնդում է Իսրայելի համար (տես՝ Ելից 19:4-6): ՆԿ-ը չի շեշտադրում որևէ քահանայի՝ իր յուրահատուկ պարտավորություններով, այլ շեշտում է այն ճշմարտությունը, որ բոլոր հավատացյալներն են քահանաներ, որը պահանջում է միասնական ծառայողական վերաբերմունք (տես՝ 1 Կորնթ. 12:7): ՆԿ-յան Աստծո ժողովրդին տրվել էր ՀԿ-ի համաշխարհային ավետարանչության առաջադրանքը (տես՝ Ծննդ. 12:3, Ելից 19:5բ, Մատթ. 28:18-20, Ղուկ. 24:46-47, Գործք 1:8, տե՛ս <u>Հատուկ Թեմա. ՅԱՀՎԵԻ Հավիտենական Փրկության Ծրագիրը</u>):

Սա Հիսուսի կողմից տրված գաղափար է, որպես ստեղծագործության սեփականատեր, քանի որ ստեղծագործության ժամանակ Նա էր Հոր գործակալը՝ կատարողը (տես՝ Հովհ. 1:3,10; 1 Կորնթ. 8:6, Կող. 1:16, Եբր. 1:2-3): Մենք ժառանգակիցներ ենք, քանի որ Նա է ժառանգորդը (տես՝ Հռոմ. 8:17, Գաղ. 4:7, Կող. 3:24): Սուրբ Գիրքն ասում է, որ հավատացյալները ժառանգելու են (տես՝ Գործք 20:32, 26:18, Եփես. 1:4, Կող. 1:12, 3:24) շատ բաներ՝ Հիսուսի հետ իրենց ընտանեկան կապի շնորհիվ, Ով ամեն ինչի ժառանգորդն է (տես՝ Եբր. 1:2): Ուստի, նրանք հետևյալ բաների ժառանգակիցներն են (տես՝ Հռոմ. 8:17, Գաղ. 4:7)՝

1. Թագավորության (տես՝ Մատթ. 25:34, 1 Կորնթ. 6:9-10, 15:50, Եփես. 5:5)
2. Հավիտենական կյանքի (տես՝ Մատթ. 19:29, Եբր. 9:15)
3. Աստծո խոստումների (տես՝ Եբր. 6:12)
4. Ըստ Աստծո խոստումների Նրա պահպանության (տես՝ 1 Պետ. 1:4-5)